ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2329

ք. Երևան «20» հոկտեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձի անունը (անվանումը),
ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի (այսուհետ՝ Պատվիրատու), ով գործում է
ազգանունը, անունը, պաշտոնը
/կանոնադրության, լիազորագրի/ հիման վրա, մի կողմից, և Արտակարգ իրավիճակների նախարարության «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Վ. Գևորգյանի (այսուհետ՝ Կատարող), ով գործում է ՀՀ օրենսդրության և կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է փորձաքննություն (այսուհետ՝ Ծառայություն) իրականացնել և տալ փորձագիտական եզրակացություն սույն ենթակետի աղյուսակին համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ Ծառայության համար:

	օբյեկտի անվանումը	օբյեկտի գտնվելու վայրը	Փորձաքննության անվանում	ԱՎՕ-ի N	տվյալներ	գործ.N	քանակը	արժեքը /ընդամենը/	փորձագետ
1	կաթսայատուն	ք.Երևան Գ.Հովսեփյան 26	տեխնիկական	8/1-6166			1	91600	Ն.Նուրոյան
2	վերելակ	ք.Երևան Գ.Հովսեփյան 26	տեխնիկական	5/1-0090/3			1	48000	Հ.Հակոբյան
3									
4									
5									
6	ընդամենը						2	139600	

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունը մատուցել սույն պայմանագրի 1-ին կետի աղյուսակում նշված փորձագետի (փորձագետների) միջոցով՝ սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված գումարը Կատարողի հաշվարկային հաշվին մուտքագրվելուց հետո՝ «4» աշխատանքային օրվա ընթացքում:

2.1.2. Ծառայության մատուցման ավարտից հետո եզրակացության մեկ օրինակը հանձնել Պատվիրատուին:

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1. Ծառայության պատշաճ մատուցման նպատակով Պատվիրատուից պահանջել փաստաթղթեր, փորձաքննության համար անհրաժեշտ այլ տվյալներ և միջոցներ:

2.2.2. Սույն պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում Պատվիրատուի հետ նախօրոք համաձայնեցված ժամանակ անարգել մուտք գործել փորձաքննության իրականացման տարածք, տարածքում տեղակայված շենքեր, շինություններ և այլ օբյեկտներ:

2.2.3. Պատվիրատուին տրամադրել միջոցառումների ծրագիր, որի կատարումը չի կարող գերազանցել երեք ամիսը:

2.3. Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. Ծառայության մատուցման համար Կատարողին վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված ծառայության գումարը:

2.3.2. Ծառայության մատուցման ընթացքում Կատարողին (սույն պայմանագրի 1-ին կետի աղյուսակով նախատեսված փորձագետին) տրամադրել Ծառայության պատշաճ մատուցման համար անհրաժեշտ և պահանջվող փաստաթղթերը, այդ թվում անհրաժեշտ այլ տվյալներ և միջոցներ.

2.3.3. Ծառայության մատուցման ընթացքում փորձաքննությունն իրականացնող փորձագետին (փորձագետներին) ապահովել անհատական պաշտպանության միջոցներով և Ծառայության մատուցման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով,

2.3.4. Ծառայության մատուցման ընթացքում Կատարողի կամ սույն պայմանագրով նախատեսված փորձագետի հետ նախօրոք համաձայնեցված ժամանակ Փորձագետին թույլատրել անարգել մուտք գործել փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ տարածք, տարածքում տեղակայված շենքեր, շինություններ, այլ օբյեկտներ:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. Ծառայության մատուցման ընթացքում Ծառայության մատուցմանը մասնակից դարձնել «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետով նախատեսված տեխնիկական անվտանգության ծառայությանը՝ վերջիններիս ապահովելով անհատական պաշտպանության միջոցներով:

2.4.2. Փորձագետից պահանջել իրեն տրամադրել փորձագիտական եզրակացության օրինակը:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն Պայմանագրի գինը կազմում է՝ 139 600/մեկ հարյուր երեսուն ինը հազար վեց հարյուր / ՀՀ դրամ, այդ թվում Ծառայության մատուցման արժեքը՝ 116 333.33 ՀՀ դրամ, ԱԱՀ-ն՝ 23 266.667 ՀՀ դրամ:

*Եթե Կատարողին ներկայացվում են Պատվիրատուին ԱԱՀ-ից ազատված լինելու վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթեր, ապա ԱԱՀ-ի գումարը ենթակա չէ վճարման:

3.2. Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված գումարը վճարվում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված գումարը սույն պայմանագիրը կնքելուց հետո երեք ամսվա ընթացքում չվճարելու դեպքում պայմանագիրը համարվում է լուծված, իսկ Պատվիրատուի գործողությունները համարվում են պայմանագրային պարտավորություններից հրաժարում:

4.2. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կողմ իրավունք ունի պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելուց հրաժարվող մյուս կողմ ից պահանջելու վճարել սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված գնի 30 տոկոսը:

4.3. Կատարողի կողմ ից Ծառայությունը չմատուցելը չի կարող համարվել պայմանագրային պարտավորություններից հրաժարում, եթե դա պայմանավորված է Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտականությունները չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով:

5. Վեճերի լուծման կարգը

Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը լուծվում են դատական կարգով:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում կատարվում է կողմերի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրի միջոցով:

6.2. Սույն Պայմանագիրը կնքված է մեկ տարի ժամկետով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կատարող**
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան Գ. Հովսեփյան 26	Հասցե՝ ք Երևան, Դավիթաշեն 4,Ա.Միկոյան 109/8
ՀՎՀՀ՝ 01540062	ՀՎՀՀ 01556354
«Ինեկոբանկ» ՓԲԸ	ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 2050022082671001	Հ/Հ 900018003724 03724
Գործադիր տնօրեն՝ Հ.Մովսիսյան	տնօրեն Վ.Գևորգյան
Կ.Տ	Կ.Տ